ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2-25

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և *ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը,* ի դեմս տնօրեն *Վլադիմիր Հարությունյանի* (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), *Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման* ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև *138581,1* հազ դրամ, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվամ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների

պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

## 3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է *138581.1 (մեկ հարյուր երեսունութ միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար մեկ հարյուր )* ՀՀ դրամ:

## 4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 127494,6 (մեկ հարյուր քսանյոթ միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գամարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությանները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## 7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9.Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100
ՀՎՀՀ, 00005673
Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ
0015, ք.Երևան,Գր. Լուսավորչի 15
Հայէկոնոմբանկի Մյասնիկյան մասնաճյուղ
Հ/հ 163038100430
Տնօրեն՝ Վ.Հարությունյան

(ստորագրություն)

Կ. Տ.

«27» 01 2015 թ. Հավելված 1
№ 2-25 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

*Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման* ծրագրի

1.Աշխատանքի կատարման հիմքը՝ *Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե*

2.Աշխատանքի նպատակը *Մակրոտնտեսական հիմնախնդիրների վերլուծությունը և կատարելագործման ուղիները*

3.Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում) *(տե՛ս կից)*

4.Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում) *(տե՛ս կից)*

5.Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը *տարեկան հաշվետվություն*

Տնօրեն _____ (Վլադիմիր Հարությունյան)
(ստորագրություն)

### *3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները*

1.Ծրագրի մշակման ժամանակահատվածը մեկ տարի է. սկիզբ *01.01.2015թ.*, ավարտ՝ *31.12.2015թ.*

2.Աշխատանքային խումբն ըստ ամբողջական ծրագիրը կազմող ենթաբաժինների, ներկայացնում է միջանկյալ հաշվետվություններ, օրացուցային պլանով նախատեսված աշխատանքների կատարման մասին:

3.Միջանկյալ գիտական արդյունքները և ամփոփիչ գիտական հաշվետվությունը ներկայացվում են պատվիրատուին ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի եզրակացության հիման վրա:

4.Միջանկյալ ամփոփիչ հաշվետվությունների ձևավորումը կատարվում է պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան:

### *4. Աշխատանքի բովանդակությունը*

Ծրագիրն իրականացվելու է չորս գիտական ուղղություններով՝ (հիմք՝ ինստիտուտի գիտական խորհրդի 15.01.2015թ. նիստի №1 արձանագրության որոշումը)

1. *Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ*
2. *Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ*
3. *Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ–ժողովրդագրական հիմնախնդիրներ*
4. *Տնտեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն*

1.*«Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ»* գիտական ուղղության շրջանակներում կհետազոտվեն.

*1.1. «Ներդրումային ծրագրերի իրականացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ իրական հատվածում».* Իրականացվելու են ներդրումային նախագծերի արժեքային և տնտեսական գնահատումներ: Ավելին՝ ներդրումային նախագծերի արժեքային գնահատման նպատակն է լինելու՝ որոշել ներդրումային նախագծի արժեքը որոշակի գնահատման ժամանակահատվածի դրությամբ: Նման գնահատման արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ տնտեսության իրական հատվածի տարբեր ոլորտներում, ինչպես նաև նախագիծը ֆինանսավորող համաներդրողների համար, ներդրումային նախագծի իրականացման նպատակով, վարկային միջոցների ներգրավման նպատակով և այլն:

1.2. *«Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ռիսկերի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում».* ՀՀ-ում ներդրվել է բազմասահման կենսաթոշակային համակարգ, որը գործող բաշխողական բաղադրիչից բացի, ներառում է ևս երկուսը՝ պարտադիր և կամավոր կուտակային: Կենսաթոշակային նոր համակարգի ներդրումն իր մեջ պարունակում է նաև որոշակի ռիսկեր, որոնցից են՝ ֆոնդերի սխալ կառավարումը, ներդրումային անուիտենտների շուկայի ռիսկերը, արժութային, քաղաքական և այլ ռիսկեր, որոնք անհրաժեշտ է մշտապես վերահսկել և կառավարել: Այս գործընթացում մեծապես կարևորվում է կուտակային կենսաթոշակային ֆոնդի կառավարչի դերը, ով պարտավորված է գործարկել ռիսկերի կառավարման համակարգը, ինչը գործունակ կդարձնի ռիսկերի վերահսկման և գնահատման հստակ մեխանիզմները, ինչպես նաև կամրագրի նրա պատասխանատվության մասնաբաժինը և չափը կենսաթոշակային ֆոնդերի կառավարման գործում: Այդ նպատակով հետազոտական աշխատանքի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման գործընթացի առանձնահատկությունները ՀՀ-ում, կենսաթոշակային համակարգերի զարգացման միջազգային առաջատար փորձը, բացահայտել կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հիմնական ռիսկերը ՀՀ-ում, ինչպես նաև կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ռիսկերի կառավարման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները: Կմշակվեն կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմանն ռիսկերի արդյունա-

վետ կառավարման ուղիներ, որոնք կնպաստեն ֆինանսական համակարգի զարգացմանը, վարկային տոկոսադրույքների նվազեցմանը, ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացմանը և ՀՀ տնտեսության զարգացմանը:

*2. «Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրները»* գիտական ուղղության շրջանակներում կհետազոտվեն.

*2.1. «Ֆինանսական միջոցների կազմավորման և օգտագործման բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում».* Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի և բնակչության կենսամակարդակի արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր նշանակություն ունի ֆինանսական միջոցների կազմավորումն ու դրանց օգտագործման բարելավման ուղիները:

Կարևորելով գյուղատնտեսության դերը Հայաստանի տնտեսության մեջ անհրաժեշտ է ուսումնասիրել այդ ոլորտի ֆինանսավորման ներկայիս մեխանիզմները, արտադրվող արտադրանքի արտահանման խթանմանն ուղղված պետական քաղաքականության առկա միջազգային փորձը, մասնավորապես կապված վարկավորման ու ներդրումային գործընթացների հետ: Վերջինս կպահանջի գյուղատնտեսության ֆինանսավորման և արտահանման խթանմանը նպաստող նոր առաջարկություններ: Ուստի այդ առումով կարևորվում է ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործման գծով հավաստի տվյալների հավաքագրումը, դրանց վիճակագրական տարբեր մեթոդներով (ընտրանքային, ինդեքսային, ժամանակագրական, բազմագործոն-ռեգրեսիոն) վերլուծությունը և արդյունավետության գնահատումը, ինչպես նաև թաքնված գործոնների բացահայտումն ու կարգավորումը:

*2.2. «Մետաղական օգտակար հանածոների պաշարները և ռեսուրսները, դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները»* Հայաստանի Հանրապետությունը բավականին հարուստ է մետաղական օգտակար հանածոներով՝ պղնձով, մոլիբդենով, կապարով, ցինկով, ոսկով, արծաթով, երկաթով և դրանց հետ կապված՝ հարակից տարածված տարրերով: Սակայն, ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը, ՀՀ հանքավայրերը շահագործվում են բարբարոսական ու թալանչիական եղանակներով. բազմաբաղադրիչ հանքավայրերի հանքաքարերից թողարկվում են միայն ու միայն կիսաարտադրանքներ՝ հիմնական մետաղների խտանյութեր և այն էլ բավականին ցածր կորզումներով: Տարեց-տարի նվազում են մետաղական օգտակար հանածոների ընդերքի հարստությունների պաշարներն ու ռեսուրսներն առանց էական ներդրումներ ունենալու հանրապետության բյուջեում: Նախատեսվում է կատարել հաշվարկներ ընդերքում մնացած պաշարների վերաբերյալ և տալ առաջարկներ ՀՀ ընդերքի հարստությունների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

2.3.*«Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա»*

1. Եվրասիական տնտեսական միության հնարավորությունները և մարտահրավերները ՀՀ տնտեսու-

թյան վրա

2. ԵՏՄ անդամակցության ազդեցության գնահատումը ՀՀ տնտեսության վրա

ա) պայմանագրում ներառված ապրանքների ցանկի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը ՀՀ բյուջեի մուտքերի վրա, բ) հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության փոփոխության ազդեցության գնահատումը, գ) ԵՏՄ անդամակցության ազդեցության գնահատումը Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների համատեքստում, դ) ԵՏՄ անդամակցության արդյունքում հնարավոր ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքային փոփոխությունները,

3. էներգակիրների գնագոյացման մոտեցումների փոփոխության հնարավոր հետևանքները

4. Եվրասիական իետեգրացիայի հետևանքով ակնկալվող ներդրումային հոսքերը և դրանց հենարավոր ազդեցությունը

*3. «Ծառայությունների ոլորտի զարգացման և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ»* ուղղության հետազոտվող թեման է.

*3.1. «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց փոխհատուցման հիմնախնդիրները».* Լրանում է Հայոց ցեղասպանության 100–ամյակը և մինչ օրս Թուրքիայի կողմից ցեղասպանություն վերապրածները և զոհերի իրավահաջորդները ոչ մի փոխհատուցում չեն ստացել: Իսկ դա պահանջում է հիմնարար հետազոտությունների և հաշվարկների իրականացում, որի արդյունքում հնարավոր կլինի պարզել պահանջվող փոխհատուցման չափը և ներկայացնել արդարացի և հիմնավորված պահանջ Թուրքիայի կառավարությանը՝ փոխհատուցելու հասցված բոլոր վնասները: Այդ նպատակով հետազոտության շրջանակում կուսումնասիրվեն արխիվային փաստաթղթերը, ինչպես նաև սփյուռքահայ հեղինակների գնահատականները՝ 1915թ. դրությամբ Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի ժողովրդագրական վիճակի, ինչպես նաև շարժական և անշարժ գույքի վերաբերյալ: Բռնազավթած ունեցվածքի գնահատման մեթոդների ուսումնասիրության հիման վրա կտրվի հայ ժողովրդի նյութական կորուստների մոտավոր գնահատականը: Կդիտարկվեն այն իրավական նորմերը, որոնց կիրառման միջոցով հնարավոր կլինի պահանջել վերադարձնել բռնազավթած սեփականությունը՝ նախ ցեղասպանություն վերապրածներին կամ նրա ժամանակ զոհված հայերի իրավահաջորդներին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետությանը, ինչպես նաև կառաջարկվեն Թուրքիայից արդարացի փոխհատուցում պահանջող օպտիմալ մեխանիզմներ:

*4. «Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն»* ուղղության հետազոտվող թեման է.

*4.1. «Հայ տնտեսագիտական մտքի արդի ընթացքի ուրվագծեր: Նորագույն շրջանի հայ տնտեսագիտական միտքը».* 2014թ–ին հրատարակվել է «Ուրվագիծ հայ տնտեսագիտական մտքի պատմության» երկհատորյակը՝ 42 տպագրական մամուլ ընդհանուր ծավալով, որը նպատակ ուներ ուրվագծել վերջին երկուսուկես տասնամյակների հայ տնտեսագիտական մտքի

արծարծումների շրջանակները: Սակայն, տնտեսական կյանքը մշտապես ենթակա է տեղաշարժերի, որը ենթադրում է նոր նյութերի շրջանառություն, նոր ուսումնասիրություններ ու նոր հրապարակումներ: Իսկ դա ենթադրում է պարբերական ընդհանրացումների անհրաժեշտությունը, ինչպես նվաճումների բացահայտման, այնպես էլ հայացքների բազմազանության կողմնորոշումների ընդհանրացման համար:

Նշվածին զուգահեռ ուսումնասիրություններ են կատարվում հայ տնտեսագիտական մտքի անցյալի գործիչների վերաբերյալ: Խոսքը վերաբերում է «Բախշի Իշխանյան տնտեսագիտական հայացքները» մենագրության շարադրանքի ավարտմանն ու հրատարակությանը:

«27» 01 2015 թ. Հավելված 2
№ 2-25 պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

*Ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի*

| NN ը/կ | Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | Վերջնաժամկետը | պահանջվող գումարը (հազ.դրամ) |
| | Ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագիր | Ծրագիրն իրականացվելու է չորս ուղղություններով | | | 31.12.2015թ. | 138581,1 |
| | | *1. Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ* | *1.1. «Ներդրումային ծրագրերի իրականացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ իրական հատվածում».* | Իրականացվելու են ներդրումային նախաէգծերի արժեքային և տնտեսական գնահատումներ, որոէշել ներդրումային նախագծի արժեքը որոշակի գնահատման ժամանակահատվածի դրությամբ: | | |
| | | | *1.2. «Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ռիսկերի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում»* | Ուսումնասիրել կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման գործընթացի առանձնահատկությունները ՀՀ-ում: Բացահայտել կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հիմնական ռիսկերը ՀՀ-ում, ինչպես նաև կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ռիսկերի կառավարման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները: | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *2. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ* | *2.1. «Ֆինանսական միջոցների կազմավորման և օգտագործման բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում».* | Ուսումնասիրել այդ ոլորտի ֆինանսավորման ներկայիս մեխանիզմները, արտադրվող արտադրանքի արտահանման խթանմանն ուղղված պետական քաղաքականության առկա միջազգային փորձը, մասնավորապես կապված վարկավորման ու ներդրումային գործընթացների հետ: | | |
| | | | *2.2. «Մետաղական օգտակար հանածոների պաշարները և ռեսուրսները, դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները»* | Նախատեսվում է կատարել հաշվարկներ ընդերքում մնացած պաշարների վերաբերյալ և տալ առաջարկներ ՀՀ ընդերքի հարստությունների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: | | |
| | | | *2.3.«Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա»* | Կուսումնասիրվեն Եվրասիական տնտեսական միության հնարավորությունները և մարտահրավերները ՀՀ տնտեսության վրա, էներգակիրների գնագոյացման մոտեցումների փոփոխության հնարավոր հետևանքները, ակնկալվող ներդրումային հոսքերը և դրանց հենարավոր ազդեցությունը: | | |
| | | *3. Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ* | *3.1.«Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց փոխհատուցման հիմնախնդիրները».* | Կուսումնասիրվեն արխիվային փաստաթղթերը, ինչպես նաև ավյուռքահայ հեղինակների գնահատականները՝ 1915թ. դրությամբ Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի ժողովրդագրական վիճակի, շարժական և անշարժ գույքի վերաբերյալ: Կդիտարկվեն այն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | իրավական նորմերը, որոնց կիրառման միջոցով հնարավոր կլինի պահանջել վերադարձնել բռնազավթած սեփականությունը: | | |
| | | *4. «Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն»* | *4.1.«Հայ տնտեսագիտական մտքի արդի ընթացքի ուրվագծեր: Նորագույն շրջանի հայ տնտեսագիտական միտքը».* | Հրատարակված «Ուրվագիծ հայ տնտեսագիտական մտքի պատմության» երկհատորյակում վերջին երկուսուկես տասնամյակների հայ տնտեսագիտական մտքի արծարծումների շրջանակները ենթադրում է նոր նյութերի շրջանառություն, նոր ուսումնասիրություններ: Անհրաժեշտու թյուն է առաջանում ինչպես նվաճում ների բացահայտման, այնպես էլ հայացքների բազմազանության կողմնորոշումների ընդհանրացման համար: | | |
| *Ընդամենը* | | | | | | *138581,1* |

ՀՀ ԳԱԱ նախագահություն

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

(ստորագրություն)

Կ.S.

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ

Տնօրեն՝ Վ.Հարությունյան

(ստորագրություն)

Կ.S.

Հավելված 3
«27» 01 2015թ.
№ Ե-25 պայմանագրի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Պայմանագրի գնի մասին համաձայնության

## Ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Հարությունյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 2015թ. N Ե-25 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 138581,1 *(մեկ հարյուր երեսունութ միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար մեկ հարյուր )* ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100
ՀՎՀՀ, 00005673
Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

(ստորագրություն)
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ
0015, ք.Երևան,Գր. Լուսավորչի 15
Հայէկոնոմբանկի Մյասնիկյան մասնաճյուղ
Հ/հ 163038100430

Տնօրեն՝ Վ.Հարությունյան

(ստորագրություն)

«27» 01 2015 թ.
№2-25

Հավելված 4
պայմանագրի

## Գիտական ծրագրի նախահաշիվ

| NN ը/կ | ծախսերի հոդվածների անվանումը | ընդամենը (հազար դրամ) | այդ թվում | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | աշխատավարձի չափը (ներառյալ եկամտային հարկը) | 119486,4 | 23897,3 | 29871,6 | 29871,6 | 35845,9 |
| 2 | տնտեսական և այլ ծախսեր | 19094,7 | 3818,9 | 4773,7 | 4773,7 | 5728,4 |
| 3 | Ընդամենը | 138581,1 | 27716,2 | 34645,3 | 34645,3 | 41574,3 |

Տնօրեն (ռեկտոր) _____ (Վլադիմիր Հարությունյան)
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (Կարինե Հակոբյան)
(ստորագրություն)

Կ.Տ.